ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի հոկտեմբերի 11-ի, ժամը 14:00-ի նիստի
N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2019» շրջանակներում իրականացվող 19YR-5B038 ծածկագրով **«Զարգացման տարածքային անհամաչափության պատճառները և կրճատման գործիքակազմի կիրառման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում»** գիտական թեմայի (ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Արմենի Հայրապետյան) իրականացման 01.09.2019 - 31.08.2021 ժամանակահատվածն ընդգրկող ամփոփիչ հաշվետվությանը հավանություն տալու մասին հարցը:

Թեմայի իրականացմամբ հետազոտական խումբն ի սկզբանե նպատակ է ունեցել բացահայտել զարգացման տարածքային անհամաչափության հաղթահարման ամենաարդյունավետ ուղիները և ըստ այդմ՝ սահմանել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են զարգացման տարածքային անհամաչափության գնահատումը, դրա պատճառների վերհանումը, հաղթահարման օտարերկրյա փորձի ուսումնասիրության արդյունքում առավել կիրառելի գործիքների առանձնացումը, գործիքակազմի կիրառման հետևանքների կանխատեսումը, անհամաչափության հաղթահարման ռազմավարության մշակումը: Թեմայի իրականացման 01.09.2019 - 31.08.2021 ժամանակահատվածում կազմվել է ՀՀ-ում զարգացման տարածքային անհամաչափության կառուցվածքը, գործոնները և պատճառները բնութագրող տվյալների շտեմարան, որը համալրվել է նաև այլ երկրների որոշ տվյալներով: Տվյալների շտեմարանը կարող է օգտագործվել զարգացման տարածքային անհամաչափության հաղթահարման լավագույն փորձի հայտնաբերման, վերլուծություններ և կանխատեսումներ կատարելու համար: Որակապես և քանակապես վերլուծելով տեղական ինքնակառավարման գործող համակարգի և քաղաքականության արդյունավետությունը՝ հիմնավորվել է միաժամանակ խոշոր և փոքր միավորների նպատակահարմարությունը: Ըստ այդմ՝ բազմակողմանի հիմնավորմամբ առաջարկվել է տեղական ինքնակառավարման երկմակարդակ համակարգի ներդրում: Վերլուծելով զարգացման տարածքային անհամաչափության գնահատման առկա մեթոդները և դրանց կիրառելիության սահմանափակումները՝ մշակվել են մեթոդաբանության չափորոշիչ և այնպիսի մեթոդ, որը լիովին բավարարում

է չափորոշչի բոլոր պահանջները: Մշակված մեթոդը հաջողությամբ փորձարկվել է բազմաթիվ երկրների տվյալներով: Որպես զարգացման տարածքային անհամաչափության հաղթահարման արդյունավետ գործիքակազմի կենտրոնական տարր՝ մշակվել է ցուցիչների ամբողջություն, որոնք առաջարկվել է գործարկել որպես պատասխանատու պաշտոնյաների գործունեության արդյունավետության ցուցիչ: Այդպիսով՝ առաջադրվել է զարգացման տարածքային անհամաչափության հաղթահարման սկզբունքորեն նոր հայեցակարգ:Գիտական արդյունքներն են՝ 1) Hayrapetyan, R., & Mnatsakanyan, T. (2021). The Efficiency of Local Governance: Large or Small Units (the Armenian Case), Public Administration Issues. Regional Science Inquiry. (ավարտված, հրատարակման գործընթացում է), 2) Mnatsakanyan, T., Hayrapetyan, R., & Molnar, D. (2021). Measuring and Overcoming the Regional Disparity of Development: the Methodology and Cases of Armenia and Serbia, Regional Science Inquiry. (ավարտված, հրատարակման գործընթացում է), 3) Հայրապետյան Ռ., Ասատրյանց Ս., Մնացականյան Տ., Զարգացման տարածքային անհամաչափության պատճառները և կրճատման գործիքակազմի կիրառման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» (որպես կոլեկտիվ մենագրություն, խմբագրման փուլում է):

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Հավանություն տալ** «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2019» շրջանակներում իրականացվող 19YR-5B038 ծածկագրով **«Զարգացման տարածքային անհամաչափության պատճառները և կրճատման գործիքակազմի կիրառման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում»** գիտական թեմայի (ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Արմենի Հայրապետյան) իրականացման 01.09.2019 - 31.08.2021 ժամանակահատվածն ընդգրկող ամփոփիչ հաշվետվությանը և այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտե: Գիտական խորհրդի 60 անդամից նիստին մասնակցել են 56-ը (քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 56, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2021 թ. հոկտեմբերի 11
Երևան